

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«13» ՄԱՅԻՍԻ 2024Թ.

N 180-Լ

ՀՐԱՄԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 164-  
Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «ե» և 29-րդ կետի «գ» ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության շրջանակում մատուցվող ծառայությունների գների հաշվարկման կարգը», «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության շրջանակում մատուցվող ծառայությունների գները հաստատելու» և «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 524-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 164-Լ հրամանի 2-րդ կետով հաստատված թիվ 2 հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Հավելվածում աղյուսակի «04, Նյութագիտական, հրդեհատեխնիկական և էլեկտրատեխնիկական փորձաքննությունների բաժին» սյունակը լրացնել նոր հետազոտության տողով՝ «09-17, Պատրաստի փորձանմուշում էլեմենտային բաղադրության հետազոտություն, մինչև ներառյալ չորս էլեմենտի քանակական պարունակության որոշում» բառերով, և համապատասխանաբար «գինը» սյունակը «52.000» թվով՝ համաձայն սույն հրամանի հավելվածի:

2. Հավելվածում աղյուսակի «04, Նյութագիտական, հրդեհատեխնիկական և էլեկտրատեխնիկական փորձաքննությունների բաժին» կետի «09-05, Հեղուկ կամ պինդ նյութերի փորձաքննություն ատոմային արտաբջիոն սպեկտրոմետրիայի մեթոդի կիրառմամբ» փորձաքննության, հետազոտության համար նախատեսված «գինը» սյունակում «80.000» թիվը փոխարինել «130.000» թվով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից և տարածվում է ուժի մեջ մտնելու պահին Կենտրոնում կատարման ընթացքի մեջ գտնվող հետազոտությունների և փորձաքննությունների նկատմամբ:

4. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

ՏՆՕՐԵՆ՝  
Դ. ՂՈՒԼՅԱՆ